

Անոն Ալի

Թիւ 1086
Մարտ 8, 1960

Հոգեշնորհ

Տ. Կաշէ Վրդ. Թովսէփեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Խաչ Եկեղեցւոյ
Եռւնիցն Միթի.

Միրելի Հայր Առաք.

Ստացած ենք 1960 Մարտ 7 Բուակիր Ձեր պաշտօնագիրը, ովով
կը տեղեկացնէք թէ Ձեր Նախագահութեամբ Յունուար 31ին գումարուած
ծխական ժողովին մէջ ընտրուած են Միական Խորհուրդի նոր անդամները,
եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձե-
րուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ ները ըստ օրինի ընտրուած
են եւ իրքեւ Եկեղեցւոյդ պարտաճանաչ անդամներ կը գայելին ընտրող-
ներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը
ըստ համարակալին.-

Տիարժ՝ Հերքլա Ազմէլիան
Գառնիկ Ներսէսեան
Տիրան Զօֆուրեան
Գառնիկ Շէնլուկեան
Հերքի Մապոննեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ մազթենք Ձեզի ու պատ-
ուարժան Միական Խորհուրդի համերաշխ ու բեղմնաւոր գործունէութիւն
ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յօդուտ մեր սիրեց-
եալ ժողովուրդին:

Մնամց Տիրաւանդ սիրոյ ողջունի
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի